10 մարտի 2016 թվականի N 220 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 1262-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի «Արդյունաբերական ընկերությունների կողմից ձեռք բերված ԱՏԳ ԱԱ 2710 19 710-2710 19 980 ապրանքախմբի ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 ապրանքախմբի ծածկագրին դասվող շարժիչային յուղերի) մասով վճարված ակցիզային հարկի գումարի վերադարձման կարգը հաստատելու մասին» N 1262-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) կարգի 9-րդ կետում «6-րդ կետով» բառերը փոխարինել «8-րդ կետով» բառերով.

2) որոշման N 1 ձևը «ակցիզային հարկը» բառերից հետո լրացնել «՝ ընկերության «_____» բանկում գտնվող թիվ _____ հաշվարկային հաշվեհամարին» բառերով.

3) որոշման N 3 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ձև N 3

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N_____

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՎՃԱՐՎԱԾ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1262-Ն որոշման համաձայն_____ ընկերության (ՀՎՀՀ՝_____) կողմից ձեռք բերված ապրանքների համար վճարված _____ ակցիզային հարկի գումարները ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ ընկերության «_____» բանկում գտնվող թիվ _____ հաշվարկային հաշվեհամարին:

_____ 201 թ.

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Կ.Տ.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ